



Հերագորոդ՝
ՍՈՒՐԵՆ ՍԵՅՐԱՆԻ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ
տնտեսագիտության թեկնածու

ԱԴԻԲԵՋԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԹՌԻԶՔԸ. ԱՌԱՍՊԵՂ, ԹԵ՛ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ե Ր Ե Վ Ա Ն
«ՏՆՏԵՍԱԳԵՏ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2014

ՀՏԴ 352(479.25)
ԳՄԴ 67.99(2Հ)1
Պ 481

**Հրատարակության և երաշխավորել
ՀՊՏՀ գիտական խորհուրդը**

Մասնագիտական խմբագիր՝
Գրիգորյան Ա. Վ.
տ.գ.թ., դոցենտ

Գրախոսներ՝ **Նազարյան Գ. Ա.**
տ.գ.թ., դոցենտ

Խմբագրական խորհուրդ՝
Աթոյան Կ. Լ. (նախագահ)
տ.գ.դ., պրոֆեսոր
Վարդանյան Գ. Ի.
տ.գ.դ., պրոֆեսոր
Սուվարյան Յու. Մ.
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տ.գ.դ., պրոֆեսոր
Ավետիսյան Ս. Ս.
տ.գ.դ., պրոֆեսոր

Ադրբեջանի տնտեսական թռիչքը. առասպել թե իրականություն
Պ 481 / Ս. Բարաջանյան.– Եր.: Տնտեսագետ, 2014 – 42 էջ.- («Ամբերդ» մատենաշար):

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել Ադրբեջանի տնտեսության առանցքային կողմերը, հասկանալ դրանց զարգացման իրական միտումները և այդ ֆոնի վրա գնահատել վերջինիս տնտեսության ներկա և ապագա հնարավորությունները:

ISBN 978-9939-61-086-3

ՀՏԴ 352(479.25)
ԳՄԴ 67.99(2Հ)1

© «Ամբերդ» հետազոտական կենտրոն, 2014 թ.
© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2014 թ.

1. Նախնական տեղեկատվություն երկրի տնտեսության մասին ...	5
2. Տնտեսության կառուցվածքը (արտահանում, ներմուծում).....	7
3. Ադրբեջանի տնտեսական զարգացման որոշ վարկանիշային ցուցանիշները.....	13
4. Ադրբեջանի վճարային հաշվեկշիռը.....	20
5. Ադրբեջանական նավթի տնտեսական և աշխարհառազմավարական ասպեկտները.....	27
Եզրակացություն.....	34
Օգտագործված գրականության ցանկ.....	39
Անփոփումներ	40

ՆԱԽՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ադրբեջանի Հանրապետությունը գտնվում է Հարավային Կովկասի տարածաշրջանում: Այն սահմանակից է Իրանին (765 կմ) և Թուրքիային (15 կմ)՝ հարավում, Ռուսաստանին (390 կմ)՝ հյուսիսում, Վրաստանին (480 կմ)՝ հյուսիս-արևմուտքում և Հայաստանին (1,007 կմ)՝ Արևմուտքում: Երկրի մակերեսը 86.600 ք/կմ¹:

Վիթխարի է Կասպից ծովի նշանակությունը երկրի տնտեսության համար, որը ողողում է երկրի ամբողջ արևելյան ափը: Այն էժան տրանսպորտային միջոց է: Ջրային ավազանը պարունակում է միլիոնավոր տոննա տարբեր աղեր, նավթի և գազի պաշարներ, արժեքավոր ձկնատեսակներ (Կասպից ծովին բաժին է ընկնում թառափի համաշխարհային որսի ավելի քան 80%-ը):

Բացի նավթից, որն արդյունահանվում էր դեռևս XIX դարից, տարբեր արդյունաբերական ձեռնարկություններ Ադրբեջանում արտադրում են պողպատ, մեքենաներ և սարքավորումներ, սինթետիկ կաուչուկ, ավտոդողեր, քիմիական նյութեր և այլն: Մնդի արդյունաբերության ճյուղերից առավել աչքի են ընկնում մրգի և ձկան պահածոների արտադրությունն ու գինեգործությունը: Զարգացած է նաև գորգագործությունը: Գյուղատնտեսության մեջ մշակում են բամբակենի, ծխախոտ, թեյ, ձիթենի, ցիտրուսներ, հացահատիկային բույսեր: Նախալեռնային շրջաններում տարածված է խաղողագործությունը:

Անասնապահության գլխավոր ճյուղը ոչխարաբուծությունն ու տավարաբուծությունն են: Զարգացած է ձկնորսությունը (հատկապես՝ թառափի և սաղմոնի):

Ադրբեջանը առևտրային կապեր է պահպանում մոտ 155 երկրների հետ: 2012 թ. Ադրբեջանի արտաքին առևտրային շրջանառությունը կազմել է 33,560 մլրդ ԱՄՆ դոլար, որը 7,61%-ով պակաս է 2011 թ. ծավալներից: 2011 թ. համեմատ արտահանման ծավալը նվազել է 10,02%-ով, կազմելով՝ 23,907 մլրդ դոլար իսկ ներմուծումը 1,06%-ով՝ 9,652 մլրդ դոլար: Ադրբեջանի արտահանման 84,63%-ը կազմում են նավթը և նավթամթերքները²: Արտահանման հիմնական գործընկերներն են Իտալիան, Ֆրանսիան, Իսրայելը, ԱՄՆ-ը, Ուկրաինան և այլ երկրներ: Ներմուծման հիմնական մասը մեքենաներ և

¹ Углубленный обзор политики Азербайджана в области энергоэффективности. Секретариат Энергетической Хартии | 2013, стр 18.

² http://www.trend.az/infographics_page.php?id=42

սարքավորումներ են, սննդամթերք, արդյունաբերական ապրանքներ: Ներմուծվող ապրանքների հիմնական մասը բերվում է Ռուսաստանից, Թուրքիայից, Գերմանիայից, Չինաստանից և այլ երկրներից³:

Ներկայումս Ադրբեջանը Սևծովյան ավազանի տնտեսական համագործակցության կազմակերպության, Իսլամական տնտեսական համագործակցության կազմակերպության, ինչպես նաև այլ տարածաշրջանային տնտեսական կազմակերպությունների անդամ է: Նման կազմակերպությունների անդամ լինելը նշանակություն ունի նաև երկրների միջև տնտեսական համագործակցության առումով:

Ադրբեջանը ԱՀԿ-ի անդամ չէ: Դիմում է ներկայացվել դեռևս 1997 թ.: ԱՀԿ-ին անդամագրվելու գործընթացն արագացնելու նպատակով 2006 թ. օգոստոսին պետության ղեկավարը ստորագրեց հատուկ կարգադրություն: Այժմ ընթանում են երկկողմանի և բազմակողմանի բանակցություններ: Չինաստանի նման տնտեսապես հզոր երկիրը ԱՀԿ-ի անդամ դարձավ 15 տարվա ընթացքում: Ադրբեջանն այդ գործընթացի մեջ է արդեն 14 տարի:

Ադրբեջանի արտաքին պարտքը 2013 թ. հունվարի 1-ի դրությամբ դուլարային համարժեքով մոտ 5,7 միլիարդ է, կամ ՀՆԱ-ի 7,6%-ը, ինչը 2012 թ. համեմատ ավելացել է 18,5 %-ով⁴:

Ադրբեջանի հանրապետությունը պաշտոնապես բաժանված է 10 տնտեսական շրջանների՝ Արշերոնի, Գանձակ-Ղազախի, Շաքի-Զաքաթալայի, Լենքորանի, Ղուբա-Խաչմասի, Արանի, Վերինդարաբադյան, Քելբաջար-Լաչինի (սակայն վերջին երկու տարածքների գերակշռող մասը փաստացի գտնվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վերահսկման տակ է և այդ պատճառով որպես «Ադրբեջանի տնտեսական շրջան» տարածքն այլևս չի գործում⁵:

³ <http://hetq.am/arm/news/5142/>

⁴ <http://interfax.az/view/568707>

⁵ http://san-stroi.ru/wo-vtafaihr41soedeowovl6/Экономические_районы_Азербайджана

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ (ԱՐՏԱՀԱՆՈՒՄ, ՆԵՐՄՈՒԾՈՒՄ)

Ադրբեջանը՝ որպես համաշխարհային տնտեսության մասնակիցներից մեկը՝ աշխատանքի միջազգային բաժանման գործընթացում հանդես է եկել որպես նավթամատակարար: Խորհրդային կարգերի փլուզումից հետո այդ դերակատարումն ավելի ընդգծվեց, քանի որ ոչ նավթային ոլորտները շաղկապված էին Խորհրդային Միության տնտեսական համակարգին և փլուզումից հետո դրանք վերականգնելն արդեն սեփական ուժերով մեծ դժվարությունների հետ էր կապված: Նավթի արդյունահանման և վաճառքի վրա կառուցված տնտեսությունները իրացման փուլում չեն հանդիպում այնպիսի խոչընդոտների, ինչպիսին, օրինակ, մրցակցությունն է: Նավթը, որպես այդպիսին, մրցակցությունից դուրս է, ամբողջ աշխարհում համարվում է բացարձակ իրացվելիություն ունեցող ապրանք: Միջազգային շուկայում նավթ ձեռք են բերում ոչ թե վերջնական սպառողները, այլ ֆինանսական միջնորդները: Էականորեն այլ իրավիճակ է ստեղծվում, երբ երկիրը փորձում է միջազգային շուկա արտահանել իր արդյունաբերական, գյուղատնտեսական, տեխնոլոգիական արտադրանքը: Ահա այս պարագայում է, որ իրացմանն առնչվող խնդիրները միանգամից ակնառու են դառնում, և մրցակցությունը սրվում է, որովհետև իրական մրցակցությունն ընթանում է այն ապրանքների միջև, որոնք կապված են ոչ թե բնական պաշարների քանակական առկայությանը, այլ որակական, գիտելիքահենք պարամետրերին: Այստեղից կարող ենք հետևություն անել, որ երկրների տնտեսության մրցունակությունը պայմանավորված է այն ապրանքների և ծառայությունների թողարկումով, որոնք մրցունակության բաղադրիչներ են պարունակում:

ԱՐՏԱՀԱՆՈՒՄ

Որպես կանոն, զարգացած երկրների արտահանման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ է կազմում տեխնոլոգիական արտադրանքը: Վերջիններս ոչ միայն արդյունաբերական արտադրանք են արտահանում այլև կապիտալ: Թույլ զարգացած տնտեսություն ունեցող երկրների արտահանման հիմքում ընկած են հումքային ռեսուրսները և տնտեսության գերկենտրոնացումը: 2009 թ. Ադրբեջանի արտահանումը կազմել է 14.7 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 6.1 մլրդ: Համեմատության համար նշենք որ 2008 թ. արտահանումը կազմել է 47.7 մլրդ, իսկ ներմուծումը՝ 7.1 մլրդ: 2009 թ. արտահանման ծավալները նվազել են 3.26 անգամ, կամ, որ նույնն է 70 % -ով: Դրա պատճառը հումքային ռեսուրսների, մասնավորապես՝ նավթի համաշխարհային գների անկումն էր: Իսկ Ադրբեջանի արտահանման կառուցվածքի դի-

նամիկան ըստ տարիների ցույց է տալիս որ, առյուծի բաժինը ընկնում է նավթահումքին:

2012 թ. դրությամբ Ադրբեջանի արտահանման կառուցվածքում նավթահումքին բաժին է ընկնում 84.6%, ինչը 20232.6 մլն ԱՄՆ դոլար է, նավթամթերքները՝ 5.5%, բնական գազ՝ 2.7%, մրգեր-բանջարեղեն՝ 1.1%, բուսական և կենդանական յուղեր՝ 0.9%, քիմիական արդյունաբերական արտադրանք՝ 0.7%, սև մետաղներ և դրանցից պատրաստված իրեր՝ 0.5%, այլումին և այլումինե իրեր՝ 0.4%:

2011 թ. համեմատությամբ այլումինի և այլումինե իրերի արտահանումը ավելացել է 7.5 անգամ, բամբակը՝ 63.9 տոկոսով, ավիոհոլային և ոչ ավիոհոլային խմիչքները՝ 35.5%, քիմիական արդյունաբերական արտադրանքը՝ 45.3%-ով, բուսական և կենդանական յուղերը՝ 27.6%, մրգեր և բանջարեղեն՝ 14.3%, բնական գազ՝ 12.9%-ով: Նավթահումքի արտահանումը նվազել է 11.7%-ով, նավթամթերքները՝ 13.5%-ով, սև մետաղները՝ 44.4%-ով:

(Տես ստորև աղյուսակ 1-ը):

Ադրբեջանից արտահանված հիմնական ապրանքների տեսակները 2012 թ.

Աղյուսակ 1

Ապրանքների անվանումը	2012 թ.		2011 թ. համեմատությամբ, %
	Արժեք (հազ. ԱՄՆ դոլար)	մասնաբաժինը արդարահանման մեջ, %	
Նավթահումք	20 232 597,80	84,63	88,31
Նավթամթերք	1 321 209,78	5,53	86,49
Բնական գազ	648 717,15	2,71	112,91
Մրգեր և բանջարեղեն	264 326,49	1,11	114,29
Բուսական և կենդանական յուղ	221 765,96	0,93	127,63
Ավիոհոլային և ոչ ավիոհոլային խմիչքներ	21 304,91	0,09	135,47
Այլումին և դրանից պատրաստված իրեր	94 929,43	0,40	748,09
Սև մետաղներ, տոննա	113 422,47	0,47	55,56
Բամբակ և բուրդ	8 156,11	0,03	163,93
Քիմիական արտադրանք	174 584,98	0,73	145,34
Այլ	806 957,11	3,37	101,51

Ադրբեջանական մանաթի բարձր փոխարժեքը բացասական ազդեցություն է թողել ոչ նավթային ապրանքների արտահանման վրա, ինչի հետևանքով մեծացել է ներմուծվող ապրանքների ծավալը: Փոխարժեքի հաստատումը ոչ բարենպաստ պայմաններ է ստեղծում ներքին արտադրողի համար, հանգեցնում տնտեսության լճացման, ավելացնում ազգային փոխարժեքի նկատմամբ պահանջարկը, թանկանում են արտահանվող ապրանքները, նվազում է արտահանումը: Դրա հետևանքով ավելի շահավետ է դառնում ներմուծելը, քան տեղում արտադրելը: Բացառություն է նավթը, որը չի համարվում մրցակցային ապրանք և համաշխարհային շուկայում միշտ պահանջարկ է վայելում: Այդ իսկ պատճառով տեսանելի ապագայում Ադրբեջանի նավթի արտահանումը ապահովված է լինելու:

Սակայն պետք է նշել, որ տնտեսական պարբերաշրջանային տատանումներով պայմանավորված՝ նավթի գները նույնպես կայուն չեն: Ադրբեջանի պարագայում նավթի գնի նվազումը 10 դոլարով հանգեցնում է 2 մլրդ դոլար վնասի: 2009 թ. նավթի մեկ բարելը 62 ԱՄՆ դոլար էր, իսկ 2008 թ.՝ 96.5 դոլար⁶: 2009 թ-ին Ադրբեջանը կորցրել է 7-ից 9-ը մլրդ. դոլար, որոնք կարող էին մուտք գործել երկիր, եթե այդ գնային տատանումը չլիներ:


Այս տեսանկյունից Հայաստանի և Վրաստանի արտահանման կառուցվածքն ավելի տարբերակված է, թեպետ հանգամանքին որ արտահանման ծավալով նրանք մի քանի անգամ զիջում են Ադրբեջանին: Եթե հաշվի առնենք նավթահումքի և նավթամթերքի արտահանումը՝ Հայաստանի և Վրաստանի արտահանման ծավալները համեմատելի են Ադրբեջանի արտահանման ծավալներին:

Վերը նշված փաստերը վկայում են, որ Ադրբեջանը չի համապատասխանում հզոր տնտեսություն ունեցող երկրների պահանջներին, այն է՝ արտահանման կառուցվածքի բազմազանեցմանը և դրանում առաջատար տեխնոլոգիաների զգալի մասնաբաժնի առկայությանը:

Արտահանման հետ կապված հիմնական գործարքներն իրականացվել են հետևյալ երկրների հետ՝ Իտալիա (23.2%), Հնդկաստան (7.9%), Ֆրանսիա (7.4%), Ինդոնեզիա (7.3%), Իսրայել (7.0%), ԱՄՆ (6.7%), Գերմանիա (4.0%), Ռուսաստան (4.0%), Հունաստան (3.5%), Թայվան (2.7%):

Արտահանման գործարքների մեջ պետության մասնաբաժինը կազմում է՝ 94.0%, մասնավոր հատվածը՝ 5.0%, ֆիզիկական անձինք՝ 1.0%:

⁶ Ibadoglu Gubad, The problems generated by the global financial crisis and ways to overcome them in Azerbaijan, Economic Research Center, Azerbaijan today, The International Magazine, Baku. 2010, http://www.erc-az.org/new/uploads/file/Meqale_Gubad%20eng.pdf.



Գծապատկեր 1

Արտահանման կառուցվածքն ըստ երկրների 2012 թ.

ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Ներմուծման կառուցվածքում մեքենաներին, սարքավորումներին, էլեկտրոնային ապրանքներին և պահեստամասերին բաժին է ընկնում 27.2 %, ինչը կազմում է 2629.6 մլն ԱՄՆ դոլար է (-13.4% 2011 թ. համեմատ), տրանսպորտային միջոցները և դրանց պահեստամասերը՝ 14.7% (-16.3), սև մետաղներ և դրանցից պատրաստված իրեր՝ 13.6% (+11.8%), սննդամթերք՝ 11.0% (-1.6%):

Ներմուծման գործարքների մեջ պետության մասնաբաժինը 21.3% է, մասնավոր հատվածը՝ 74.1%, ֆիզիկական անձինք՝ 4.6%


(Տես ստորև աղյուսակ 2-ը):

Աղյուսակ 2

Աղբրեջան ներմուծած հիմնական ապրանքների տեսակները 2012 թ.

Ապրանքների անվանումը	2012 թ.		2011 թ. համեմատությամբ %
	Արժեք (հազ. ԱՄՆ դոլար)	մասնաբաժինը արդյունահանման մեջ, %	
Միս	15 772,33	0,16	70,06
Ալյուր	6 107,98	0,06	10,12
Կարագ	136 808,37	1,42	113,08
Կաթ	6 966,78	0,07	74,91
Ցորեն	339 828,47	3,52	120,50
Շաքար և շաքարավազ	176 549,50	1,83	105,21
Մեքենաներ, սարքավորումներ, էլեկտրոնային ապրանքներ	2 629 611,10	27,24	86,60
Տրանսպորտային միջոցներ և պահեստամասեր	1 414 435,65	14,65	83,71
Փայտ և փայտյա իրեր	274 100,80	2,84	106,32
Սև մետաղներ, տոննա	1 310 518,41	13,58	111,83
Կահույք և դրա մասեր	100 297,30	1,04	136,45
Դեղագործական ապրանքներ	241 735,25	2,50	99,47

Ներմուծման հետ կապված հիմնական գործարքներն իրականացվել են հետևյալ երկրների հետ՝ Թուրքիա (15.8%), Ռուսաստան (14.3%), Գերմանիա (8.1%), ԱՄՆ (7.4%), Չինաստան (6.6%), Ուկրաինա (5.6%), Մեծ Բրիտանիա (5.1%), Ղազախստան (3.5%), Իտալիա (2.7%), Ճապոնիա (2.5%):



Գծապատկեր 2

Ներմուծման կառուցվածքը՝ ըստ երկրների 2012 թ.

Աղյուսակ 3

Ադրբեջանի հանրապետության արտաքին առևտրի ցուցանիշները 2007 – 2012 թթ.

(մլն ԱՄՆ դոլար)

	2007 թ.	2008 թ.	2009 թ.	2010 թ.	2011 թ.	2012 թ.
Առևտրաշրջանառություն	11771,7	54922,8	20818,2	27924,1	36326,9	33560,8
Դինամիկան %	101,1	4,7 անգ. ավելի	37,9	134,1	129,9	92,4
Արտահանում	6058,2	47756,2	14698,5	21324,8	26570,9	23908,0
Դինամիկան %	95,1	7,9 անգ. ավելի	30,8	145,1	124,4	90,0
Ներմուծում	5713,5	7166,6	6119,7	6599,3	9756,0	9652,8
Դինամիկան %	108,5	125,4	85,4	107,8	147,8	99,0
Մնացորդ	344,7	40589,6	8578,8	14725,5	16814,9	14255,2

Աղյուսակ 4

Ադրբեջանի հանրապետությունում կատարված օտարերկրյա ուղղակի ներդրումների համախառն ներհոսքը ըստ հիմնական երկրների ⁷

(մլն ԱՄՆ դոլար)

Երկիր	2007	2008	2009	2010	2011	2012
Մեծ Բրիտանիա	1366,6	1275,8	908,3	1559, 0	1427,9	2144,2
ԱՄՆ	769,1	541,8	271,0	449,3	458,7	580,1
Ճապոնիա	402,5	276,7	140,8	180,0	290,4	396,1
Նորվեգիա	251,3	173,5	88,2	139,9	162,4	216,4
Թուրքիա	198,3	184,2	69,9	118,5	132,1	170,5
Չեխիա	26,1	39,2	43,2	270,9	127,2	163,2
Ռուսաստանի Դաշնություն	1,8	12,4	1,1	2,4	-	-
Ընդամենը ներդրումներ	3218,9	2780,9	1846,6	3007,4	3199,3	4142,4

Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ամենամեծ ներդրում կատարել է համաշխարհային բանկը:

Աղյուսակ 5

Միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից Ադրբեջանի հանրապետությունում կատարված ներդրումները 2011–2012 թթ ⁸

(մլն ԱՄՆ դոլար)

ՄՖԿ	2011 թ.	2012 թ.
Համաշխարհային բանկ	185,5	169,0
Ասիական զարգացման բանկ	60,5	120,5
Իսլամական զարգացման բանկ	2,1	11,1
ԵՎԶԲ (Եվրոպական վերակառուցման և զարգացման բանկ)	132,3	0,07
Եվրախորհուրդ	*	1,0
Տնտեսական զարգացման Քուվեյթի ֆոնդ	0,9	*
«TASIS» ծրագիր	6,4	*

⁷ <http://www.stat.gov.az/>

⁸ <http://www.stat.gov.az/>

ԱԴԻԲԵՋԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՐՈՇ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Տնտեսական վարկանիշային ցուցանիշները ազգային տնտեսության վիճակն արտացոլող, միջազգային հեղինակավոր կազմակերպությունների կամ կառավարության հրապարակած հաշվետվությունների, զեկույցների, ինդեքսների ձևով ներկայացվող մակրոտնտեսական տվյալներ են, որոնք բնութագրում են որոշակի ժամանակահատված և տեղեկատվություն են տրամադրում շուկային՝ տնտեսության աճի կամ անկման վերաբերյալ:

Տնտեսական ցուցանիշների մասին խոսելիս պետք է հաշվի առնել, որ տնտեսական կյանքը, հարաբերությունները բազմազործոն են, քառսային (ֆրագտայ) բնույթ ունեն, ուստի հնարավոր չէ ամբողջությամբ հաշվարկել և մեկ տնտեսական ցուցանիշի (համաթվի) միջոցով արտացոլել այս կամ այն տնտեսական գործընթացը:

Այդուհանդերձ, ստորև ներկայացված ցուցանիշները, միջազգային տնտեսական գործող հարաբերությունների պայմաններում, հնարավորություն են տալիս հնարավորինս ամբողջական կերպով համեմատելի դարձնելու տարբեր երկրների տնտեսական վիճակը:

Համախառն ներքին արդյունք ՀՆԱ /Gross Domestic product (GDP)

ՀՆԱ-ն այս կամ այն ժամանակահատվածում (սովորաբար, մեկ տարի) երկրների տնտեսական գործունեության արդյունքները բնութագրող, համընդհանուր կիրառություն ունեցող, տնտեսական զարգացման առանցքային քանական ցուցանիշներից մեկն է: Այլ տնտեսական ցուցանիշների հետ համադրելիս ՀՆԱ-ն օգտագործվում է տարբեր տնտեսական գործընթացներ բնութագրելիս, ինչպես նաև տնտեսական կոնյուկտուրային փոփոխությունները վերլուծելիս: Սովորաբար այս ցուցանիշը դիտարկվում է որպես բնակչության կենսամակարդակը բնութագրող ցուցանիշ, քանի որ միջազգային պրակտիկայում ավելի նպատակահարմար ցուցանիշ, որը հնարավորություն կտար համընդհանուր կերպով համեմատելու երկրների միջև բնակչության կենսամակարդակը դեռևս գոյություն չունի: Այս առումով ՀՆԱ-ի ցուցանիշը փոխզիջումային բնույթ է կրում:

2013 թ. հուլիսին հրապարակված Համաշխարհային բանկի (*The World Bank*) տվյալներով⁹ 2012 թ. դրությամբ Ադրբեջանի ՀՆԱ-ն 67 մլրդ 198 մլն ԱՄՆ դոլար է, որով համախառն ներքին արդյունքի ծավալով աշխարհի 176 երկրների վարկանիշային ցուցակում նա զբաղեցնում է 67-րդ հորիզոնականը:

⁹ <http://gtmarket.ru/ratings/rating-countries-gdp/rating-countries-gdp-info>

Համեմատության համար նշենք, որ Հայաստանը ՀՆԱ-ի ծավալով (9 մլրդ 910 մլն ԱՄՆ դոլար) 132-րդ հորիզոնականում է:

Մեկ շնչին ընկնող համախառն ազգային արդյունք (ՀԱԱ) / Gross national income (GNI)

Այս ցուցանիշը ցույց է տալիս, թե յուրաքանչյուր բնակչի հաշվով որքան են արտադրված ապրանքները և ծառայությունները: Այլ կերպ ասած՝ որքան կստանար յուրաքանչյուր քաղաքացի, եթե ազգային եկամուտը հավասարաչափ բաշխվեր:

Ամբողջ աշխարհում ըստ համաշխարհային բանկի՝ մեկ շնչին ընկնող ազգային եկամտի տարեկան հաշվարկման մեթոդաբանության¹⁰ բոլոր երկրները և տարածքները դասակարգվում են հետևյալ կերպ՝

1. Բնակչության մեկ շնչին ընկնող բարձր եկամուտ ունեցող երկրներ (12616 ԱՄՆ դոլար և ավելի)
2. Բնակչության մեկ շնչին ընկնող միջին եկամուտ ունեցող երկրներ (1036 ԱՄՆ դոլարից մինչև 12615 ԱՄՆ դոլար)
3. Բնակչության մեկ շնչին ընկնող ցածր եկամուտ ունեցող երկրներ (1035 ԱՄՆ դոլար և դրանից ցածր)

Վերը նշված մոտեցումը համաշխարհային բանկի պաշտոնական վերլուծական դասակարգումն է: Ռոպես տեղեկատվության աղբյուր է հանդես գալիս համաշխարհային բանկի տվյալների բազան (World Development Indicators):

Մեկ շնչին ընկնող համախառն ազգային եկամտի ցուցանիշով Ադրբեյջանը 193 երկրների ցանկում 6050 ԱՄՆ դոլարով զբաղեցնում է 90-րդ հորիզոնականը, իսկ Հայաստանը 3720 ԱՄՆ դոլարով 116-րդը: Այս ցուցանիշներով վերջիններս համարվում են բնակչության մեկ շնչին ընկնող միջին եկամուտ ունեցող երկրներ:

Տարեսական ազատության համաթիվ (Index of Economic Freedom) –

Սա համախմբված ցուցանիշ է, որը ցույց է տալիս աշխարհի երկրների տնտեսական ազատության աստիճանը: Հրապարակում են Ամերիկյան հետազոտական ընկերության (Ժառանգության հիմնադրամը /The Heritage Foundation) և The Wall Street Journal ամսագիրը: Հիմնադրամի փորձագետները տնտեսական ազատությունը բնութագրում են որպես «Պետական միջամտության բացակայություն կամ ապրանքների և ծառայությունների արտադրության, բաշխման և սպառման խթանման քաղաքականություն, բացառությամբ քաղաքացիների անհրաժեշտ շահերի և ազատության պաշտ-

¹⁰http://databank.worldbank.org/data/download/GDP_PPP.pdf

պանման»։ Տնտեսական ազատության համաթվի վերլուծությունն իրականացվում է ամեն տարի, սկսած 1995 թվականից¹¹։

Տնտեսական ազատության ինդեքսը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հետևյալ տասը հիմնական ցուցանիշները։

1. Մեփականության իրավունք
2. Ազատություն կոռուպցիայից
3. Ֆիսկալ ազատություն
4. Կառավարության մասնակցությունը
5. Ձեռնարկատիրության ազատություն
6. Աշխատանքի ազատություն
7. Մոնետար ազատություն
8. Առևտրի ազատություն
9. Ներդրումային ազատություն
10. Ֆինանսական ազատություն

Ամեն մի ցուցանիշի համար դրվում են համապատասխան միավորներ՝ 0-100 : Որքան շատ են միավորները՝ այդքան տվյալ երկրի տնտեսությունը համարվում է ազատ և՛ հակառակը։ Ամեն մի երկիր, իր միավորներին համապատասխան, դասակարգվում է հետևյալ հինգ խմբերից մեկում։

1. Ազատ տնտեսություն ունեցող երկրներ (100-ից 80 միավոր ստացած երկրներ)։
2. Առավելապես ազատ տնտեսություն ունեցող երկրներ (70-ից 80 միավոր)։
3. Բավարար ազատ տնտեսություն ունեցող երկրներ (60-ից 70 միավոր)։
4. Առավելապես ոչ ազատ տնտեսություն ունեցող երկրներ (50-ից 60 միավոր)։
5. Ոչ ազատ տնտեսություն ունեցող երկրներ (50 միավորից ցածր)։

Տնտեսական ազատության հայեցակարգը հիմնվում է շոտլանդացի տնտեսագետ Ադամ Սմիթի գաղափարների վրա, որն առաջ է քաշվել վերջինիս «Ազգերի հարստություն» (The Wealth of Nations, 1776) գրքում։

Այս ցուցանիշով Ադրբեյջանը 177 երկրների կազմում զբաղեցնում է 87-րդ հորիզոնականը համարվելով՝ առավելապես ոչ ազատ տնտեսություն ունեցող երկիր։ Հայաստանը զբաղեցնում է 38-րդ հորիզոնականը, համարվելով՝ բավարար ազատ տնտեսություն ունեցող երկիր¹²։

¹¹ Рейтинг стран мира по уровню экономической свободы — информация об исследовании. [Электронный ресурс] // Центр гуманитарных технологий. URL: <http://gtmarket.ru/ratings/index-of-economic-freedom/index-of-economic-freedom-info>

¹² <http://gtmarket.ru/ratings/index-of-economic-freedom/index-of-economic-freedom-info#azerbaijan>

*Միջազգային մրցունակության համաթիվ
(The Global Competitiveness Index)*

Այս ցուցանիշը հաշվարկվում է Միջազգային տնտեսական ֆորումի (World Economic Forum) մեթոդով, որը հիմնված է համընդհանուր վիճակագրական տվյալների, կազմակերպության ղեկավարների հարցումների, գլոբալ տարեկան հետազոտությունների վրա: Միջազգային տնտեսական ֆորումի հետազոտություններն իրականացվում են համատեղ՝ այլ երկրների առաջատար հետազոտական կենտրոնների, համապատասխան հաստատությունների աջակցությամբ: Հետազոտությունն իրականացվում է 2004 թ. և տվյալ պահին ներկայացնում է տարբեր երկրների մրցունակությունը բնութագրող՝ հնարավորինս ամբողջական տնտեսական ցուցանիշները:

Տարբեր երկրների տնտեսական մրցունակությունը բնութագրվում է տարաբնույթ գործոններով. ինչպես, օրինակ, տնտեսության վիճակի վրա բացասաբար ազդող պետական ֆինանսական միջոցների անարդյունավետ կառավարումը և բարձր գնաճը, իսկ դրական ազդեցության օրինակ են մտավոր սեփականության իրավական պաշտպանվածությունը, զարգացած դատական համակարգը և այլ գործոններ: Որպես ինստիտուցիոնալ գործոններ որոշիչ նշանակություն կարող են ունենալ կրթությունը, աշխատուժի որակավորման բարձրացումը, նորագույն գիտելիքների և տեխնոլոգիաների հասանելիությունը և այլն: Տնտեսության մրցունակությունը բնութագրող գործոնները տարբեր երկրների տնտեսությունների վրա տարբեր ազդեցություն են գործում՝ կախված նրանց բազային տվյալներից և ընթացիկ զարգացման տեմպից: Ակնհայտ է նաև, որ տնտեսության մրցունակությունը բնութագրող գործոնները նույնպես ժամանակի ընթացքում փոփոխվում են:

Միջազգային մրցունակության ինդեքսը բաղկացած է 113 փոփոխականից, որոնք մանրամասն բնութագրում են տնտեսական զարգացման տարբեր մակարդակների երկրների մրցունակությունը: Այդ փոփոխականների երկու երրորդը բաղկացած է տարբեր կազմակերպությունների ղեկավարների հարցումների արդյունքներից (ընդգրկելու համար գործոնների լայն շրջանակ, որոնք ազդում են հետազոտվող երկրների գործարար միջավայրի վրա), իսկ մեկ երրորդը՝ համընդհանուր աղբյուրներից (միջազգային կազմակերպությունների՝ պարբերաբար հրապարակվող վիճակագրական տվյալները և հետազոտության արդյունքները):

Բոլոր փոփոխականները միավորված են ազգային մրցունակությունը բնութագրող 12 հիմնական ցուցանիշներում¹³:

1. Ինստիտուտների որակը
2. Ենթակառուցվածքները

¹³ URL: <http://gtmarket.ru/ratings/global-competitiveness-index/info>

3. Մակրոտնտեսական կայունությունը
4. Առողջապահությունը և նախակրթական համակարգը
5. Բարձրագույն կրթությունը և պրոֆեսիոնալ վերապատրաստումը
6. Ապրանքային և ծառայությունների շուկայի արդյունավետությունը
7. Աշխատաշուկայի արդյունավետությունը
8. Ֆինանսական շուկայի զարգացվածությունը
9. Տեխնոլոգիական զարգացվածության մակարդակը
10. Ներքին շուկայի ծավալները
11. Կազմակերպությունների մրցունակությունը
12. Ներդրումային ներուժը

Վերը նշված փոփոխականների ընտրությամբ են պայմանավորված տեսական և գործնական հետազոտությունները, և դրանցից յուրաքանչյուրն առանձին չի կարող ապահովել տնտեսության մրցունակությունը: Օրինակ՝ կրթությանն ուղղված ծախսերի ավելացումը կարող է նվազել աշխատաշուկայի անարդյունավետության պատճառով, մակրոտնտեսական միջավայրի բարելավմանն ուղղված քայլերը, ինչպես, օրինակ, պետական ֆինանսական միջոցների օպտիմալացումը, կարող է հաջողվել, եթե սպասվող շահույթի մեծությունը գերազանցում է անհրաժեշտ ներդրումների ծավալը:

Այսպիսով, առավել մրցունակ են համարվում այն երկրների տնտեսությունները, որոնք ի վիճակի են իրականացնելու բազմագործոնային ուսումնասիրությունների համընդհանուր քաղաքականություն: Ադրբեջանն այս ցուցանիշով զբաղեցնում է 39-րդ հորիզոնականը իսկ Հայաստանը՝ 79-րդ:

Բիզնեսի վարման համաթիվ (Doing Business)

Համաթիվը հաշվարկվում է համաշխարհային բանկի (World Bank) և միջազգային ֆինանսական կազմակերպությունների մեթոդաբանությամբ, որը հիմնված է ձեռնարկատիրական գործունեությունը կարգավորող նորմատիվ-իրավական ակտերի և վիճակագրական տվյալների վերլուծության արդյունքների վրա: Հետազոտությունն իրականացվում է ամեն տարի, սկսած 2002 թ. և այժմ ներառում է ձեռնարկատիրական գործունեության կարգավորման գրեթե ամբողջական ցուցացանիշների համակարգ: Հետազոտման մեթոդը և վերլուծության տիպային մոդելը համարվում է աշխարհի տարբեր երկրների ձեռնարկատիրական գործունեության վրա պետության ազդեցության գնահատման միակ գործիքը:

«Բիզնեսի վարման» գործընթացն ուղղված է ազգային կազմակերպությունների, առաջին հերթին՝ փոքր և միջին ձեռնարկությունների կենսագործունեության ամբողջ ընթացքի (ձևավորումից մինչև լուծարում) վերլուծությանը:

Տարբեր երկրների ձեռնարկատիրական գործունեության կարգավորման պայմանները համադրելու համար հետազոտության շրջանակներում իրականացվում է քանակական ցուցանիշների բազմակողմանի տվյալների հավաքագրում և վերլուծություն: Դրանով իսկ այս ցուցանիշի կիրառումն առավել արդյունավետ է դարձնում տարբեր երկրների ձեռնարկատիրական գործունեության կարգավորման գործընթացը, ապահովում է չափելի կողմնորոշիչներ բարեփոխումների իրականացման համար և ծառայում որպես տեղեկատվական աղբյուր գիտնականների, լրագրողների, հետազոտողների, մասնավոր հատվածի համար, որոնք հետաքրքրված են տարբեր երկրների գործարար միջավայրով:

«Բիզնեսի վարման» համաթվի կազմման գործընթացում մեթոդական և փորձագիտական օգնություն են ցուցաբերում տարբեր երկրներից ներգրավված ավելի քան 7000 փորձագետներ, ձեռնարկատիրական գործունեության հարցերով խորհրդատուներ, իրավաբաններ, տնտեսագետներ, կառավարության անդամներ, ինչպես նաև առաջատար գիտնականներ:

Համաթիվն արտացոլում է աշխարհի երկրների վարկանիշը՝ ըստ ձեռնարկատիրական գործունեության վարման աջակցության աստիճանի: Այսինքն՝ որքանով՝ են ոլորտը կարգավորող պետական հաստատությունները նպաստում, աջակցում ձեռնարկատիրական գործունեության կայացմանը:

Վերջինս հաշվարկվում է տասը հիմնական պարամետրերի միջին թվաբանականով՝

1. Կազմակերպությունների գրանցումը
2. Շինարարական աշխատանքների թույլտվության ստացումը
3. Էլեկտրասնուցման համակարգի միացումը
4. Սեփականության գրանցումը
5. Վարկավորումը
6. Ներդրողների պաշտպանվածությունը
7. Հարկումը
8. Միջազգային առևտուրը
9. Օրենքների և պայմանագրերի իրականացումը
10. Կազմակերպությունների իրացվելիությունը

Վարկանիշային ցուցակում երկրները դասակարգվում են առաջինից մինչև վերջին հորիզոնականը: Առաջին հորիզոնականը նշանակում է, որ այդ տարածքում գործարար միջավայրն առավելապես նպաստում է ձեռնարկատիրական գործունեությանը: Համաթվի հաշվարկման ժամանակ հաշվի չեն առնվում այնպիսի փոփոխականներ, ինչպիսիք են մակրոտնտեսական քաղաքականությունը, ենթակառուցվածքների որակը, աշխատուժի որակավորումը, արտարժույթի տատանումները, ներդրողների կարծիքը, անվտան-

գությունը և կոռուպցիայի մակարդակը: Այսպիսով, գործարարության վարման համաթվի որոշումն իրականացվում է՝ առանց հաշվի առնելու քաղաքական ասպեկտները, բացառությամբ օրենսդրական և նորմատիվային ակտերի ուսումնասիրման:

Այս ցուցանիշով¹⁴ Հայաստանը գտնվում է 37-րդ հորիզոնականում իսկ Ադրբեջանը 70-րդ:

Թեպետ Ադրբեջանը գործարարության վարման և տնտեսական ազատության համաթվի ցուցանիշներով զիջում է Հայաստանին, պետք է նշել, որ վերջին տասը տարիների ընթացքում Ադրբեջանը ապահովել է տնտեսական աճի երկնիշ ցուցանիշներ: 2009 թ. ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում, ի տարբերություն Հայաստանի, որտեղ նկատվել է ՀՆԱ-ի չորս տոկոսային կետի անկում, Ադրբեջանը կարողացել է պահպանել տնտեսական աճի դրական տեմպը: Հաշվի առնելով Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտությունը՝ հատկանշական ենք համարում նշել նաև պաշտպանության վրա կատարված ծախսերը: Վերջին 10 տարիների ընթացքում Ադրբեջանը ծախսել է 15.8 մլրդ ԱՄՆ դոլար իսկ Հայաստանը՝ 3.3 մլրդ:

Ադրբեջանը այսօր բնակչության մեկ շնչի հաշվով օտարերկրյա ուղակի ներդրումների հաշվով ԱՊՀ երկրների կազմում առաջատար դիրք է զբաղեցնում: Սակայն պետք է նշել որ այդ ներդրումների մեծ մասը նավթային ուղղվածություն ունի, իսկ նավթային արդյունաբերությունը չի համարվում աշխատատար ոլորտ: Երկրի տնտեսությունն առավելապես կախված է նավթային հատվածից: Վերջին 5 տարիների ընթացքում այդ հատվածի մասնաբաժինը արտահանման մեջ կազմել է 75%–95%, որի ներուժն անսպառ չէ: Ադրբեջանը լուրջ խնդիրներ ունի ոչ նավթային հատվածում օտարերկրյա ուղակի ներդրումների ներգրավման առումով:

¹⁴ <http://doingbusiness.org/>

ԱՌՐԲԵՋԱՆԻ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿԵԾԻՌԸ

Վճարային հաշվեկշիռը Ադրբեջանի արտաքին տնտեսական կապերը գնահատող ամենաառանցքային ուղղություններից է, հնարավորություն է տալիս պարզելու աշխատանքի միջազգային բաժանման մեջ տվյալ երկրի մասնակցության արդյունավետությունը: Տնտեսագետների շրջանում տարբեր բնութագրումներ են տրվում վճարային հաշվեկշռի վերաբերյալ, սակայն բովանդակությունը դրանից չի փոխվում:

Վճարային հաշվեկշիռն արտացոլում է երկրի վճարունակության ամբողջական տեղեկատվությունը և մեծ նշանակություն ունի արտաքին առևտրի՝ ներդրումների, արտարժույթային վերահսկողության, փոխարժեքի որոշման քաղաքականության կարգավորման հարցերում¹⁵:

Վճարային հաշվեկշիռը արտասահմանյան երկրների հետ տվյալ երկրի քաղաքացիների, կազմակերպությունների կողմից պարբերաբար իրականացրած տնտեսական գործարքների արժեքային արտացոլումն է¹⁶:

Վերջին տարիներին այնպիսի գործոններ, ինչպիսիք են տնտեսական աճի տեմպը, ներմուծվող ապրանքների նկատմամբ պահանջարկի ավելացումը, կապիտալի ներհոսքի ընդլայնումը, միջազգային շուկայում նավթի գնի բարձրացումը, էական փոփոխություններ են առաջացրել Ադրբեջանի վճարային հաշվեկշռի կառուցվածքում:

1999 թ. սկսած՝ առաջին անգամ, Ադրբեջանի վճարային հաշվեկշռում առաջացավ դրական մնացորդ, որը 2004 թ. արդեն կայուն բնույթ էր կրում: Ինչպես երևում է ստորև ներկայացված աղյուսակ 1-ից,¹⁷ 2004 թ. վճարային հաշվեկշռի դրական մնացորդը կազմում էր 244 մլն ԱՄՆ դոլար: 2008 թ. դրական մնացորդը հասավ իր ամենաբարձր սահմանին՝ 12,5 մլրդ դոլար, ինչը ինն անգամ ավելին էր, քան նախորդ տարվա ցուցանիշը: Այդուհանդերձ, 2006 թ. սկսած՝ արտասահմանյան ներդրողների եկամտային մասնաբաժնի արտահոսքը բացասական ազդեցություն ունեցավ վճարային հաշվեկշռի ակտիվության վրա: Բացի դրանից 2005-2010 թթ. ընթացքում Ադրբեջանի կողմից կատարված ներդրումների հետ վերադարձը¹⁸ կազմել է 20.2 մլրդ դոլար, ինչը կազմում է տվյալ ժամանակահատվածի ՀՆԱ-ի 9.5%-ը:

¹⁵ . Методологические разъяснения. Центральный Банк Азербайджанской Республики // Статистический Бюллетень. — 2010. — № 1 (119). — С.50

¹⁶ . Kevin BUCKNALL, The Balance of Payments, October 2004, p. 241, <http://www.zen40585.zen.co.uk/U6-3.BofP.pdf>

¹⁷ http://en.cbar.az/assets/2958/Azerbaijan_respublikasinin_tediye_balansi.pdf

¹⁸ репатриация инвестиций

Ադրբեջանի վճարային հաշվեկշռի կառուցվածքը

	1995	2000	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Ընթացիկ հաշիվներ									
Արտաքին առևտրի հաշվեկշիռ	-373	319	161	3299	7745	15224	23012	14583	19730
Ապրանքների արտահանում	612	1858	3743	7649	13014	21269	30586	21097	26476
Նավթի և գազի ոլորտում	305	1579	3233	6883	12075	20190	29143	19970	25108
Այլ ոլորտներ	307	279	510	766	939	1079	1443	1127	1369
Ապրանքների ներմուծում	-985	-1539	-3582	-4350	-5269	-6045	-7574	-6514	-6746
Նավթի և գազի ոլորտում	-64	-147	-1624	-1927	-1752	-1292	-1064	-700	-838
Այլ ոլորտներում	-921	-1392	-1958	-2423	-3517	-4753	-6510	-5814	-5908
Ծառայությունների հաշվեկշիռ	-132	-225	-2238	-1970	-1923	-2131	-2343	-1613	-1733
Նավթի և գազի ոլորտում		-150	-1909	-1657	-1603	-1967	-1970	-1206	-1241
Այլ ոլորտներում	-132	-75	-329	-313	-320	-164	-373	-407	-492
Ընդամենը ծառայություններ									
Տրանսպորտ	-16	-62	-12	-25	-84	56	112	-139	-158
Շինարարություն	-17	-57	-172	-86	-1364	-1425	-1332	-599	-124
Եկամուտներ	-6	-12	-9	-335	-701	-5079	-5266	-3519	-3467
Ընթացիկ տրանսֆերտներ	111	66	45	73	189	1005	1050	722	509
Կապիտալի և ֆինանսական շարժերի հաշիվներ									
Ուղղակի ներդրումներ (զուտ)	155	591	1051	29	2330	-5103	-545	146	329
Ադրբեջանի տնտեսությունում	155	591	1068	588	4698	4291	3982	2899	3347
օտարերկրյա տնտեսությունում				-1	-1205	-286	-556	-326	-232
Ներդրումների վերադարձ			-17	-558	-1363	-9108	-3971	-2427	-2786
Նավթային բնույթներ	175	37	64	100	22	68	3	1	2
Պորտֆելային և այլ ներդրումներ	233	296	44	313	621	-725	-3015	-6165	-3935
Փոփոխություններ պորտֆելային ակտիվներում	-162	7	-244	-274	-384	-2898	-12050	-2691	-1046

Ինչպես նախորդ տարիներին, 2010 թ. նույնպես նավթագազային ոլորտում իրականացված արտաքին տնտեսական գործարքները դրական մնացորդ են ունեցել, իսկ ոչ նավթային ոլորտում՝ բացասական: Նավթագազ-

յին ոլորտից առաջացող ընդհանուր մուտքերը հիմնականում ձևավորվել են նավթի և գազի արտահանումից և այդ ոլորտում ներգրավված արտասահմանյան կապիտալից: Ինչ վերաբերում է ելքերին, ապա դրանք արտացոլվում են եկամուտների և ներդրումների վերադարձի, ինչպես նաև սարքավորումների և ծառայությունների ներմուծման տեսքով: 2010 թ. նավթագազային ոլորտի ընթացիկ հաշիվների հաշվեկշռում առաջացած դրական մնացորդը կազմում է 19.86 մլրդ ԱՄՆ դոլար, բացասական մնացորդը ըստ եկամուտների՝ 3.17 մլրդ դոլար, ֆինանսների և կապիտալի շարժի բացասական մնացորդը՝ 3.59 մլրդ դոլար:

Վերջին տարիներին «Դարի պայմանագրի» շրջանակներում, արդյունահանման ծավալների ավելացման, նավթահումքի արտահանման և միջազգային շուկայում նավթի գնի բարձրացման շնորհիվ Ադրբեջանի արտաքին առևտրային հաշվեկշիռը նախորդ ժամանակահատվածի համեմատ մի քանի անգամ ավելացել է:


Ըստ 2010 թ. վիճակագրական տվյալների¹⁹ արտահանված ապրանքների ծավալը կազմել է 26.5 մլրդ դոլար, ինչը 43.2 անգամ ավելի է, քան 1995 թ. և 14.3 անգամ ավելի, քան 2000 թ.: Ներմուծման ծավալը 1995 թ. և 2000 թ. համեմատ ավելացել է համապատասխանաբար՝ 6,9 և 4,4 անգամ և կազմել է 6,7 մլրդ դոլար: Արտաքին առևտրային հաշվեկշռի դրական մնացորդը հիմնականում պայմանավորված է նավթագազային ոլորտով:

Վճարային հաշվեկշռի հիմնական հոդվածների վերլուծությունը ցույց է տալիս, որ թեպետ 1996 թ. տնտեսությունում իրականացված օտարերկրյա ներդրումները նպաստել են վճարային հաշվեկշռի դրական մնացորդի առաջացմանը, իսկ 2000 թ հետո նավթի արդյունահանման և արտահանման ծավալների ավելացումը, որպես արդյունք օտարերկրյա ներդրումների, հնարավորություն տվեց բարձրացնելու վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշիվների դրական մնացորդը մինչև ՀՆԱ-ի 29% աճի, այդուհանդերձ, 2005 թ. սկսած արտասահմանյան կապիտալի հետադարձ հոսքը և Ադրբեջանական կազմակերպությունների, մասնավորապես՝ «SOCAR» կազմակերպության օտարերկրյա ներդրումային քաղաքականությունը, բացասական մնացորդ առաջացրեց վճարային հաշվեկշռի կապիտալի հոսքերում: Առանցքային խնդիրներից մեկն այն է, որ արագ տնտեսական աճը զուգորդվում է ՀՆԱ-ի կազմում անորոշ գումարների մեծ տեսակարար կշռով: Ինչպես, օրինակ, 2008 թ. անորոշ գումարների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմում էր 1.7%, 2009 և 2010 թ-ին համապատասխանաբար՝ 3.3% և 1.9%, ինչն էլ, մի կողմից՝ ավելացնում է վճարային հաշվեկշռի եկամտային մասը, որը հանգեցնում է երկրի դրամային ռեսուրսների ավելացման, մյուս կողմից էլ՝ պայմաններ

¹⁹ http://www.stat.gov.az/source/system_nat_accounts/indexen.php

ստեղծում ադրբեջանական մանաթի թանկացման համար: Այդ հանգամանքի առաջացման վրա մեծ ազդեցություն ունեցավ նավթային պայմանագրերի շրջանակներում, օտարերկրյա ներդրումների ձևով արտարժույթի ներհոսքի ավելացումը: 2010 թ. արտարժույթի շուկայի ծավալը կազմում էր 32,31 մլրդ ԱՄՆ դոլար, ինչը 16,3 անգամ ավելի, քան 2001 թ.: Ներմուծվող ապրանքների գծով բանկային փոխանցումների տեսակարար կշիռը ավելի էր կանխիկ փոխանցումներից, դրա համար փոխարժեքային գործարքների ծավալը միջբանկային հատվածում իրականացվող գործարքների կտրվածքով ավելացավ 25%-ով:

Առաջարկը 1,3 մլրդ դոլարով գերազանցեց պահանջարկին: Մանաթի հետագա թանկացումը զսպելու նպատակով Կենտրոնական բանկն իրականացրեց արտարժույթի ինտերվենցիա՝ 2010 թվականին ստերիլիզացնելով 1,39 մլրդ ԱՄՆ դոլար: Բոլոր այդ միջոցառումներով հանդերձ՝ ադրբեջանական մանաթի իրական արժեքն աճեց 0,65%-ով:



Գծապատկեր 3

Վճարային հաշվեկշռի մնացորդի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում ըստ հոդվածների (%-ներով)

Դիտարկելով վճարային հաշվեկշռի վրա ազդող բազմաբնույթ գործոնները՝ գալիս ենք այն եզրահանգման, որ հաշվեկշռի հավասարակշռումը բարդ խնդիր է և, այս առումով, դժվար է գտնել մի երկիր, որն անբեկանելիորեն ցանկանում է պահպանել այդ հավասարակշռությունը, քանի որ դրա որոշակի խախտման մակարդակը (մուտքային և ելքային հոսքերի տարբե-

րությունը) տնտեսության կայունության համար ուղղակի սպառնալիք չի համարվում: Իհարկե, խոսքը որոշակի մեծության մասին է:

Օրինակ՝ վճարային հաշվեկշռի բացասական մնացորդը հանգեցնում է նրան, որ արտարժույթի պակասորդը ծածկելու նպատակով օգտագործվում են պետական պաշարները, որոնք անսահմանափակ չեն: Այդ իսկ պատճառով պետությունն իրականացնում է նաև հովանավորչական միջոցառումներ՝ ներմուծումը զսպելու և արտահանումը խթանելու ուղղությամբ: Եթե կապիտալի ներհոսքը զգալիորեն գերազանցում է արտահոսքը ապա երկիրն ընդունողի կարգավիճակ է ստանում՝ իր բոլոր բացասական դրսևորումներով հանդերձ: Օտարերկրյա ներդրումներն ազգային տնտեսության համար յուրահատուկ ժամանակավոր խթանիչներ են (դոպինգներ), քանի որ ժամանակի ընթացքում տվյալ երկրում ստեղծված համախառն ազգային արդյունքի մի մասը, շահույթի ձևով վերադառնում է օտարերկրյա ներդրողին՝ նվազեցնելով տնտեսական աճի իրական տեմպերը:

Այն երկրները, որոնք հետ են մնում առաջատարներից իրենց տնտեսության զարգացման մակարդակով, ակտիվ վճարային հաշվեկշիռն անհրաժեշտ է դրամական միջոցներ ներգրավելու և միջազգային պարտավորությունները մարելու համար: Արդյունաբերապես զարգացած երկրներն ակտիվ վճարային հաշվեկշիռը օգտագործում են այլ երկրներում երկրորդ տնտեսության ստեղծման նպատակով: Վճարային պասիվ հաշվեկշիռ ունենալը անցանկալի է և հիմնականում վկայում է տվյալ երկրի միջազգային տնտեսական թույլ դիրքի մասին: Զարգացած երկրների համար դա կարող է այլ բնույթ կրել: Օրինակ՝ 1971 թ. ԱՄՆ-ի վճարային հաշվեկշռի պակասորդը պայմանավորված էր այլ երկրների կազմակերպությունների կողմից իրենց շուկայում տեխնոլոգիապես բարդ արտադրվող ապրանքների առաջնդման քաղաքականությամբ:

Քանի որ պահանջարկի զգալի մասը բավարարվում է ներմուծման շնորհիվ, ապա երկրում ստեղծված հավելյալ արժեքը ծախսվում է ներմուծվող արարանքների ձեռքբերման վրա:

Ադրբեջանի վճարային հաշվեկշռի վերլուծությունը ցույց է տալիս, որ արտաքին առևտուրը ՀՆԱ-ի մեջ մեծ տեսակարար կշիռ է կազմում, իսկ դա նշանակում է, որ արտաքին տնտեսական փոփոխություններից կախվածությունը մեծանում է: Արտարժույթային պահուստների մեծ ծավալները կարևոր նշանակություն ունեն երկրի միջազգային իրացվելիության մակարդակի բարձրացման, Կենտրոնական բանկի կողմից կայուն փոխարժեքի սահմանման, պետական արտաքին պարտքի ֆինանսավորման, վճարային հաշվեկշռի պակասորդի վերացման համար:

Վճարային հաշվեկշռի հիմնական ցուցանիշներից է համարվում ծառայությունների հաշվեկշիռը, ում հիմնականում ներառվում են զբոսաշրջու-

թյան, կապի և միջազգային տրանսպորտին վերաբերող ծառայությունները: Ադրբեջանի և արտասահմանյան երկրների միջև ձևավորված տնտեսական կապերի զգալի մասը փոխադարձ ծառայություններն են: 2010 թ. նման ծառայությունների թիվը կազմել է 5,86 մլրդ. դոլար, որից 3,8 մլրդ. դոլարը ոչ ռեզիդենտների կողմից ադրբեջանի ռեզիդենտներին մատուցված ծառայություններն էին, իսկ 2,06 մլրդ. դոլարը Ադրբեջանի ռեզիդենտների կողմից ոչ ռեզիդենտներին մատուցված ծառայությունները: Այսպիսով, ծառայությունների հաշվեկշռի պակասորդը հիմնականում պայմանավորված է միջազգային պայմանագրերի շրջանակներում իրականացվող նավթագազային գործունեությամբ: Ուսումնասիրվող ժամանակահատվածում այդ ոլորտի գործունեությունից առաջացած 5,5 մլրդ դոլարից 2,0 մլրդ. դոլար վճարվել է օտարերկրյա ռեզիդենտներին շինմոնտաժային ծառայությունների դիմաց, ինչն առաջացրել է ծառայությունների հաշվեկշռի պակասորդ:

2010 թ. վճարային հաշվեկշռում արտացոլված փոխադարձ ծառայությունների շրջանառության 24,6%-ը բաժին է ընկնում տրանսպորտային ծառայություններին: Տրանսպորտային ծառայությունների ընդհանուր գումարը կազմել է 1,45 մլրդ դոլար: Իր հերթին, Ադրբեջանի ռեզիդենտների մատուցած տրանսպորտային ծառայությունների ընդհանուր գումարը կազմել է 643,9 մլրդ. դոլար, ինչը 2,7 անգամ ավելի է, քան 2009 թ., 69,9%-ով ավելի քան 2005 թ. և 3,9 անգամ ավելի, քան 2001 թ.:

Վճարային հաշվեկշռի հաջորդ կարևոր ցուցանիշներից մեկը տուրիստական գործունեությանն առնչվող՝ արտարժույթային միջոցների ներմուծման և արտահանման ծավալներն են: Ըստ վիճակագրական տվյալների՝ օտարերկրյա քաղաքացիներին մատուցված զբոսաշրջային ծառայությունների արժեքը գնահատվել է 177,8 մլն. դոլար, որից 33,2%-ը կապված է դեպի Ադրբեջան ոչ ռեզիդենտների իրականացրած գործուղումներով: Գործուղման նպատակներով եկած ոչ ռեզիդենտներին մատուցված ծառայությունների արժեքը 2009 թ. համեմատ աճել է 29,3 մլն դոլարով, կազմելով 59,0 մլն դոլար:

Ադրբեջանի վճարային հաշվեկշիռը վերլուծելիս անհրաժեշտ է նշել, որ կապիտալի իրական հոսքն էսպես տարբերվում է պաշտոնական վիճակագրական տվյալներից: Ըստ այդ տվյալների՝ ադրբեջանական կապիտալի մի մասն ապօրինի ճանապարհով տեղափոխվում է արտասահման՝ պորտֆելային ներդրումների, ավանդների և անշարժ գույքի ձեռքբերմամբ: Տարբեր գնահատականներով՝ միայն 1992–2002 թթ. երկրից արտահանվել են 6-ից 10 մլրդ ԱՄՆ դոլար: Վերջին 10 տարիների ընթացքում այդ թիվն ավելացել է մի քանի անգամ:

Կապիտալի արտահոսքը հանգեցնում է մի շարք բացասական երևույթների առաջացման՝

- նվազում են երկրի ներդրումային ռեսուրսները,
- բացասաբար է անդրադառնում երկրի վճարային հաշվեկշռի ցուցանիշների վրա,
- նվազում է արժույթի առաջարկը երկրի ներսում, որի հետևանքով առաջանում են դժվարություններ մանաթի և արտարժույթի փոխարժեքային կուրսը որոշելիս,
- դանդաղում են արժույթային պաշարների աճը և արտաքին պարտքի սպասարկումը,
- մակրոտնտեսական կայունությունը խախտվում է, ինչի հետևանքով հնարավոր է ազգային արժույթի արժեզրկում, գնաճ, բնակչության սոցիալտնտեսական վիճակի անկում:

Ադրբեջանական տնտեսության կախվածությունը արտաքին տնտեսական միջավայրից, մասնավորապես՝ նավթագազային ոլորտից, ավելի է մեծացնում վերը նշված ռիսկերը: Վերջին տարիների վիճակագրական տվյալները ցույց են տալիս որ նավթագազային ոլորտում արտաքին տնտեսական ցուցանիշները դրական մնացորդ ունեն, իսկ ոչ նավթային ոլորտը՝ բացասական: Արտաքին առևտրի հաշվեկշռի կառուցվածքը հիմնականում բաղկացած է նավթահումքի արտահանումից: Այս առումով՝ նավթի համաշխարհային գների փոփոխությունը բացասաբար է անդրադառնում արտահանման ծավալների և, ընդհանուր առմամբ, վճարային հաշվեկշռի վրա: Այսպես՝ ստեղծվում է մի իրավիճակ, երբ վճարային հաշվեկշռի մնացորդը կախված է լինում նավթի համաշխարհային շուկայի գներից:

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՆԱՎԹԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԱՌԱՋՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ

1994 թ-ի սեպտեմբերի 20-ին Բաքվում 8 երկրներից (Ադրբեջան, Թուրքիա, ԱՄՆ, Ճապոնիա, Մեծ Բրիտանիա, Նորվեգիա, Ռուսաստանի Դաշնություն, Սաուդյան Արաբիա) նավթարդյունահանման 13 խոշոր կազմակերպությունների միջև կնքվեց լայնամասշտաբ միջազգային պայմանագիր Կասպից ծովի ադրբեջանական հատվածի երեք հանքավայրերի (Ազերի, Չիրազ, Գյունեշլի) համատեղ վերամշակման վերաբերյալ, որն իր մեծ դերակատարման համար ստացավ «Դարի պայմանագիր» անվանումը²⁰:

Պայմանագրի մեջ ներառված էին Amoco, British Petroleum, McDermott, Unical, Socar, Lukoil, Statoil, Ecson, Turkish Petroleum, Pennzoil, Itochu, Remco, Delta ընկերությունները²¹: Այդ պայմանագիրը ճանապարհ հարթեց 26 համաձայնագրերի կնքման, որի շրջանակներում 19 երկրներից ներգրավվեցին ևս 41 նավթային կազմակերպություններ:

Ադրբեջանի նավթային համալիրը

Ադրբեջանը միջազգային կազմակերպությունների համար բացեց իր դռները 1991 թ. անկախացումից հետո և այդ պահից սկսած աջակցում է հանքավայրերի հետազոտման և արդյունահանման ուղղությամբ կատարվող ներդրումների ներգրավմանը:


«Ազերի-Չիրազ-Գյունեշլի» (ԱՉԳ) հանքավայրերի վերամշակումը և Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի բացումը մեծապես նպաստեցին այդ գործընթացի իրագործմանը:

Սակայն որոշ միջազգային կազմակերպություններ, որոնք բաժնետնասակցության սկզբունքով գործում էին Ադրբեջանի պետական նավթային կազմակերպության հետ համատեղ, հետազոտությունների ընթացքում չհայտնաբերեցին ակնկալվող արդյունաբերական ծավալի ածխաջրածնային պաշարներ, ինչը որոշ չափով զսպեց Ադրբեջանի նավթային հարստությունների վերաբերյալ շրջանառվող լավատեսական կանխատեսումները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱՉԳ հանքավայրերից բացի վերամշակման համար նախատեսված նման խոշոր հանքավայրեր այլևս հայտնաբերված չեն, հիմնական ծանրաբեռնվածությունը ընկնում է հենց այս հանքավայրերի վրա:

²⁰ http://archive.president.az/browse.php?sec_id=57

²¹ http://www.azerbaijan.az/_Economy/_OilStrategy/oilStrategy_04_r.html

Ադրբեջանական հանքավայրերից արդյունահանված նավթի ամենամեծ ծավալները գրանցվել են 2009 և 2010 թթ, որից հետո անկում է տեղի ունեցել, և առաջիկա տարիներին նախատեսվում է արդյունահանման ծավալները հասցնել նախկին ցուցանիշներին: Տարբեր փորձագետների երկարաժամկետ գնահատականներով՝ 2020 թ. սկսած ադրբեջանական նավթի արդյունահանման ծավալներն աստիճանաբար նվազելու են՝ 2035 թ. հասնելով մինչև 0,9 մլն բար/օր.



ծավալի: Այդ կանխատեսումներով և արդեն բազմիցս իրականացված հետախուզական աշխատանքներով հանդերձ՝ ֆրանսիական Total կազմակերպությունը կրկին սկսել է ուսումնասիրել Ապշերոնի տեղանքը: Նույնը կարելի է ասել գերմանական RWE կազմակերպության՝ Նախիջևանի տարածքում հետազոտական աշխատանքների վերաբերյալ: Ավելի երկարաժամկետ հեռանկարում, Ադրբեջանի ծովային սահմանների հետ կապված վեճերի կարգավորման արդյունքում, արդյունահանման հնարավորությունները կարող են ավելանալ:

Մասնավորապես՝ խոսքը վերաբերում է կասպից ծովի «Մերդար» (ադրբեջանական անվանումը «Քյափազ») հանքավայրի վիճելի տարածքին, ինչպես նաև Ադրբեջանի և Իրանի սահմանին գտնվող «Ալով» հանքավայրին:


Ազերի – Չիրազ – Գյունեշլի (Ա2Գ)

Ազերի-Չիրազ-Գյունեշլի նավթահանքերը սկսել են գործել դեռևս խորհրդային տարիներին՝ 1979-ից, մինչև 87թթ.: Դրանք տեղակայված են Բաքվից 100-ից 120 կմ դեպի արևելք՝ Կասպից ծովի ավազանում: Նավթահանքերի շահագործումն իրականացնում են Ադրբեջանի պետական նավթային կազմակերպությունը (SOCAR), ինչպես նաև «Դարի պայմանագրի» շրջանակներում գործող այլ միջազգային նավթային կազմակերպություններ: Պայմանագրերը գործում է մինչև 2024 թվականը:

Պայմանագրի իրագործման նպատակով՝ 1995 թ. Ադրբեջանի պետական նավթային կազմակերպությունը (ԱՊՆԿ) և օտարերկրյա նավթային 10 կազմակերպություններ ստեղծեցին Ադրբեջանի միջազգային օպերացիոն ընկերություն (ԱՄՕԸ)՝ որպես պայմանագրի շրջանակներում իրականացվող աշխատանքների համակարգող: ԱՄՕԸ-ի գործառույթների մեջ էր մտնում նավթագազային օպերացիաների անցկացման և իրականացման հետ կապված բոլոր աշխատանքների համակարգումը: 1999 թ. ծրագրի համակարգող

է դառնում Բրիթիշ Փերոլիումը (BP), որը պայմանագրով ամենամեծ մասնաբաժինն ուներ:


Ազերի-Չիրազ-Գյունեշլի նավթահանքերի բլոկը 5x50 կմ չափի և 1,4 կմ խորության ահռելի կառուցվածքային ենթահամակարգ է, որի պաշարները կազմում են մոտ 930 մլն տոննա նավթ, ինչը, իր հերթին, աշխարհի նավթային պաշարների մոտ 0,5 տոկոսն է: Մինչև համաձայնագրի կնքումը 1994 թ. նավթային պաշարները գնահատվում էին 500 մլն տոննա:



Ազերի-Չիրազ-Գյունեշլի հանքավայրի չափսերը

Ազերի-Չիրազ-Գյունեշլի հանքավայրերից արդյունահանված նավթի ամենամեծ քանակությունը գրանցվել է 2010 թ. երրորդ եռամսյակում՝ օրական 835,1 հազ բարել²²: Նոր հանքահորերի շահագործմամբ հանդերձ՝ 2012 թ. առաջին եռամսյակում արդյունահանված նավթի միջին օրական թիվը 711,8 հազ բարել էր: 2012 թ-ի կիսամյակային տվյալներով միջին օրական ցուցանիշը կազմել է 684 հազ. բարել²³:

Ըստ կանխատեսումների՝ այդ ցուցանիշը տարեց տարի նվազելու է: Նավթի մեկ բարելի ինքնարժեքը մինչև Ջեյհան նավահանգիստ մոտ 7,5 ԱՄՆ դոլար է (3,5 դոլար՝ 1 բարել նավթի արդյունահանման ծախսերը, 1 դոլար՝ գործառնական ծախսերը, մոտ 3 դոլար՝ տարանցիկ ծախսերը)²⁴:




²² http://www.azeri.ru/papers/contact_az/101296/

²³ <http://www.neftgazexpert.ru/neftgazline/neftgaztext149453.html>

²⁴ <http://www.window2baku.com/oil5.htm>

Ադրբեջանական նավթի արդահանումը և տարանցիկ երթուղիները

Ածխաջրածինը դեպի միջազգային շուկա արտահանելու համար մշակվեց նավթային ռազմավարություն, որով նախատեսվում էր ադրբեջանական նավթի փոխադրում ՌԴ-ի տարածքով՝ Բաքու-Նովորոսիսկ և Վրաստանի տարածքով՝ Բաքու-Սուփսա, այնուհետև հիմնական նավթամուղի միջոցով, Թուրքիայի տարածքով՝ դեպի Ջեյհանի նավահանգիստ: Իրագործելով նավթային ռազմավարության հիմնադրույթները՝ վերականգնվեցին և կառուցվեցին հետևյալ խողովակաշարերը՝ Հյուսիսային արտահանման երթուղին, Արևմտյան արտահանման երթուղին, Բաքու-Թբիլիսի-Ջեյհան և Հարավ-Կովկասյան (գազային) երթուղին:



Հյուսիսային Արդահանման խողովակաշար – Բաքու-Նովորոսիսկ

Խողովակաշարի երթուղին սկսվում է Բաքվի Մանգաչալի տերմինալից, անցնում Կասպից ծովի երկայնքով՝ հասնելով դեպի Նովորոսիսկ: Երկարությունը՝ 1400 կմ, տրամագիծը՝ 21"/530 մմ, թողունակությունը՝ 115 000 բարել օրական (15750 տոննա օրական): Գործարկվում է 1997 թ.: Խողովակաշարը գոյություն ուներ դեռևս խորհրդային տարիներին: Թերություններն են՝ փոխադրման բարձր ծախսեր, սահմանափակ թողունակություն, ինչպես նաև այն, որ ադրբեջանական նավթի թանկարժեք տեսակները խառնվում են ցածրարժեք սիբիրյան նավթի հետ:

Արևմտյան Արտահանման խողովակաշար – Բաքու–Սուփաս

Խողովակաշարի երթուղին սկսվում է Բաքվի Սանգաչալի տերմինալից, Ադրբեջանի և Վրաստանի տարածքով անցնելով, հասնում է Սև ծովի ավին գտնվող Սուփասայի տերմինալ: Երկարությունը՝ 837 կմ, տրամագիծը՝ 21"/530 մմ, թողունակությունը՝ 115 000 բարել օրական (15750 տոննա օրական): Գործարկվում է 1999 թ. ապրիլի 17-ից: Խողովակաշարը գոյություն ունեւր դեռևս խորհրդային տարիներին:

Հիմնական Արտահանման խողովակաշար – Բաքու–Թբիլիսի–Ջեյհան

Հիմնական Արտահանման խողովակաշարի (ՀԱԽ) կառուցումը դարձավ աշխարհի խոշոր էներգետիկ նախագծերից մեկը: Այն ելք ապահովեց ադրբեջանական նավթին դեպի միջազգային շուկաներ՝ թուրքական Ջեյհան նավահանգստի միջոցով:

Խողովակաշարի երթուղին հնարավորություն տվեց շրջանցելու Բոսֆորի նեղուցը և, դրանով իսկ, կանխելու այդ նեղուցով անցնող տանկերների հոսքը՝ նվազեցնելով շրջակա միջավայրին վնաս հասցնելու ռիսկը:



Խողովակաշարի երթուղին անցնում է Կարբեր լանդշաֆտներով



Խողովակաշարի առավելագույն բարձրացումը 2800 մետր է ծովի մակարդակից

Նախագծի իրագործման համար 2002 թ. օգոստոսի 1-ին հիմնվում է «BTC» Co. խողովակաշարային կազմակերպությունը, որի բաժնետերերն են դառնում՝ BP (Մեծ Բրիտանիա)՝ 30,1% (նախագծի համակարգող), SOCAR (Ադրբեջան)՝ 25%, Unocal (ԱՄՆ)՝ 8,9%, Statoil (Նորվեգիա)՝ 8,71%, TRAO (Թուրքիա)՝ 6,53%, ENI (Իտալիա)՝ 5%, Total (Ֆրանսիա)՝ 5%, Itochu (Ճապոնիա)՝ 3,4%, Inpex (Ճապոնիա)՝ 2,5%, ConocoPhillips (ԱՄՆ)՝ 2,5% և Amerada Hess (ԱՄՆ)՝ 2,36%:

Կառուցման աշխատանքները սկսվել են 2003 թ. ապրիլին: Նավթամուղի ընդհանուր երկարությունը կազմում է 1767 կմ է, որից Թուրքիային բաժին է ընկնում 1076 կմ, Ադրբեջանին՝ 443 կմ, Վրաստանին՝ 248 կմ: Խողովակաշարի թողունակությունը՝ 50 մլն տոննա տարեկան, կամ 1 մլն բարել օրական: Առաջին տանկերը Ադրբեջանական նավթով դուրս է եկել Թուրքիայի Ջեյհան նավահանգստից 2006 թ. հունիսի 2-ին: ԲԹՋ նավթամուղի ծառայության ժամկետը սահմանվել է 40 տարի, վերջին 15 տարում դառնալու է Ադրբեջանի սեփականությունը:

2007թ. հունիսի 16-ին ԲԹՋ նախագծին պաշտոնապես միացավ Ղազախստանը:

Ադրբեջանի և Ղազախստանի միջև ստորագրված համաձայնագիրը նախատեսում էր Ակտաու–Բաքու ուղղությամբ նավթային փոխադրման համակարգի ստեղծում, տանկերներով Կասպից ծովով դազախական նավթի փոխադրում դեպի Ադրբեջան՝ հետագայում ԲԹՋ նավթամուղով տեղափոխելու համար:

ԲԹՋ նավթամուղի ծրագիրը զգալի օգուտներ է բերում տարածաշրջանի բնակչությանը: Վերը նշված երկրները, որոնց տարածքով անցնում է տարանցիկ խողովակաշարը, ստանում են զգալի եկամուտներ՝ ամրապնդելով տնտեսական և քաղաքական կապերը միմյանց հետ:

Հարավ-Կովկասյան խողովակաշար – Բաքու-Թբիլիսի-Էրզրում

Խողովակաշարը կառուցվել է Ադրբեջանի «Շահդենիզ» հանքավայրից Թուրքիայի տարածքով դեպի եվրոպական շուկաներ գազի փոխադրման նպատակով: ՀԿԽ կազմակերպության բաժնետերերն են՝ BP (Տեխնիկական համակարգող՝ 25,5%), Statoil (կոմերցիոն համակարգող՝ 25,5%), Ադրբեջանի պետական նավթային կազմակերպություն (SOCAR՝ 10%), NICO (10%), Total (10%) և TRAO (9%): Խողովակաշարի երկարությունը 690 կմ է (442 կմ-ն ադրբեջանական հատվածն է, 248 կմ-ը՝ վրացական): Խողովակի տրամագիծը՝ 42 դույմ, առավելագույն թողունակությունը՝ 20 մլրդ խոր. մ գազ տարեկան: Գործարկվել է 2006 թ. մայիսին:

Ադրբեջանի խողովակաշարերի ցանցը Անդրկովկասում ընդարձակվեց՝ Ազերի-Չիրազ-Գյունեշլի հանքավայրերից արդյունահանվող նավթի ծավալներին համապատասխանեցնելու համար: Այսպիսով, նավթի փոխադրման գործող հզորությունները բավարար են, ապահովելու համար Ադրբեջանի նավթի և գազի արտահանման՝ մինչև 2035թ. պլանավորված ծավալները: Ադրբեջանի և տարածաշրջանի համար ռազմավարական նշանակության հարց է առաջանալու՝ ինչպես պետք է օգտագործվեն դեպի Անդրկովկաս տարածվող խողովակաշարային ենթակառուցվածքները, երբ Ադրբեջանի ներքին պաշարները սկսեն նվազել:

Ներկայումս British Petroleum կազմակերպության գնահատականներով՝ Ադրբեջանի հիմնավորված նավթային պաշարները մոտ 1 մլրդ տոննա են: Այժմյան արդյունահանման ծավալների պայմաններում՝ կբավականացնի մոտ 20 տարի: Գազի պաշարները՝ 1,3 տրլն խոր. մ:

Հաշվի առնելով կանխատեսվող արդյունահանման ծավալները՝ կբավականացնի մոտ 30 տարի: Ադրբեջանի գնահատականներով՝ այդ ծավալներն են՝ 2 մլրդ տոննա և 2,2 տրլն խոր. մ:

BP-ի գնահատականներով՝ գազի արդյունահանումը 2008–2011 թթ. կազմել է 15 մլրդ խոր. մ., սակայն Ադրբեջանի պետական վիճակագրական կոմիտեի և Ադրբեջանի պետական նավթային կազմակերպության (SOCAR) տվյալներով՝ նույն ժամանակահատվածում ավելացել է 23-ից մինչև 26 մլրդ խոր. մ: Միջազգային էներգետիկ գործակալության (IEA) տվյալները 2-3 մլրդ խոր. մ-ով ավելի են BP-ի ներկայացրած տվյալներից և զգալիորեն պակաս են ադրբեջանական աղբյուրներից:

Վիճակագրության նման անհամապատասխանությունների պատճառը մեթոդների հաշվարկման տարբերությունն է:

Ներկայումս Ադրբեջանից արտահանվող նավթամուղերը ծանրաբեռնված են մոտ 60%-ով: Ըստ տարբեր փորձագիտական կանխատեսումների մինչև 2015 թ. երկիրը կարող է նավթի արդյունահանման ծավալները հասցնել լավագույն դեպքում 2010 թ. մակարդակին, որից հետո արդյունահանման և արտահանման ծավալներն անխուսափելիորեն անկում են ապրելու²⁵ :

²⁵ http://www.gas-journal.ru/gij_spec/gij_detailed_work.php?GIJ_ELEMENT_ID=59167&WORK_ELEMENT_ID=59349

Վերջին տարիներին Ադրբեջանն առաջանցիկ տեմպերով շարժվում է Համաշխարհային բանկի «Doing Business» վարկանիշային ցանկում, հատկապես՝ 2009 թ. ձեռնարկությունների գրանցման գործում «միասնական պատուհանի» սկզբունքի ներմուծումից հետո:

Այդուհանդերձ երկրում մնում են գործարար միջավայրին առնչվող դեռևս չլուծված խնդիրներ: Չկան սեփականության իրավունքի անձեռնմխելիության երաշխիքներ: Վերջին տարիներին ճանապարհների, զբոսայգիների, պետական հաստատությունների շենքերի և այլնի շինարարության ընդլայնման հետ միասին նկատվում են սեփականության իրավունքի զանգվածային խախտման դեպքեր:

Լայնորեն տարածված են պաշտոնեական կամայականությունն ու կոռուպցիան: Բացի դրանից, պետական պաշտոնյաները զբաղվում են ձեռնբեցույթամբ և վերահսկում տնտեսական գործունեության գրեթե բոլոր բնագավառները:

Կոռուպցիան Ադրբեջանի հիմնական խնդիրն է: Այդ երկրի տնտեսությունը կենտրոնացած է իշխող խմբավորումների ձեռքում: Ըստ ադրբեջանական «Contact.az» էլեկտրոնային պարբերականի՝ 2011 թ. սեպտեմբերի 28-ին այդ մասին Կասպիական-եվրոպական գործնական ինտեգրացիոն ակումբի անդամների հետ հանդիպման ժամանակ հայտարարել է Ադրբեջանում ԱՄՆ դեսպան Մեթյու Բրայզան:

«Ավելի վաղ Ադրբեջանում կային խանություններ, հիմա դրանք չկան: Թեև Ադրբեջանը անկախ պետություն է, սակայն տնտեսական համակարգում նման խանությունները դեռ մնում են: Դրա համար էլ ամերիկյան ընկերություններին դժվար է այստեղ աշխատել, նրանց համար անհասկանալի է՝ ում հետ աշխատել և զարգացնել բիզնեսը», - ասել է դեսպանը²⁶:

Ադրբեջանի տնտեսությունը, իր հումքային կախվածությամբ և ներկա կառուցվածքով, մրցունակ չէ տարածաշրջանային և համաշխարհային շուկաներում:

Այսպես, ՀՆԱ-ի մինչև 53%-ը արտադրվում է արդյունաբերության ոլորտում, իսկ արդյունաբերական արտադրության մոտ 80%-ը բաժին է ընկնում հանքարդյունաբերությանը (սավթի, գազի և այլ հանքային հարստություններ, որտեղ զբաղված է աշխատող բնակչության 2%-ից էլ փոքր մասը): Վերջին տարիներին զարգացող շինարարության հատվածի բաժինը

²⁶ <http://www.contact.az/search/document.php?id=24432&vr=ru#.UphKM9IW300>

ՀՆԱ-ում մոտ 7% է: Երկրի գյուղատնտեսությունը, որտեղ աշխատում է զբաղված բնակչության մինչև 40%-ը, արտադրում է ՀՆԱ-ի ընդամենը 5%-ը²⁷:

Եվ սա այն դեպքում, երբ երկիրն ունի բնական և կլիմայական բարենպաստ պայմաններ գյուղատնտեսության ավելի հզոր զարգացման համար: Անարդյունավետ է գյուղատնտեսության զարգացման կառավարման քաղաքականությունը:

Վերջին տարիներին կառավարությունն ավելի ու ավելի մեծ ուշադրություն է հատկացնում զբոսաշրջությունը, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաներին: Բայց այդ ջանքերի արդյունքները դեռևս հեռու են ցանկալի մակարդակից:

Ամերիկացի գրող, «Նավթային անեծքը՝ ժողովրդի զարգացման ձև» գրքի հեղինակ, պրոֆեսոր Մայքլ Ռոսսը նշում է, որ Ադրբեջանի տնտեսությունը մեծապես կախված է նավթային եկամուտներից, ինչը սկսելու է նվազել 2016 թ.:

Նա նաև նշել է, որ «Ադրբեջանում խնդիրն ավելի խորն է, քան նավթով հարուստ մյուս երկրներում: Ընդ որում՝ պետական բյուջեում բացակայում է թափանցիկությունը, ինչպես նաև շատ գումարներ են ծախսվում Ադրբեջանի պետական նավթային «SOCAR» ընկերության վրա, որն էլ, իր հերթին, ավելի քիչ թափանցիկ է»²⁸:

«Եթե ինչոր մեկը կարող է մտածել, թե Ադրբեջանը իրենից ներկայացնում է հաջողակ կառավարվող տնտեսություն ունեցող երկիր, ապա նշենք, որ այն կառավարվում է բռնապետերի կողմից: Մեր իշխանությունները չեն ցուցաբերում հանդուրժողականություն ոչ միայն քաղաքական հակառակորդների, այլ նաև բիզնեսում իրենց մրցակիցների նկատմամբ»: Այս մասին հայտնել է Թուրան լրատվական գործակալությունը՝ վերլուծական անդադարձ կատարելով «Doing Business 2012» զեկույցում Ադրբեջանի զբաղեցրած հորիզոնականին:

Վերլուծելով զեկույցի մանրամասները և Ադրբեջանի տնտեսական բարեփոխումները՝ աղբյուրը նշել է, թե զարմանալի է, որ իշխանություններն արդեն 4 տարի է՝ միշտ բարձրաձայնում են, թե «Ադրբեջանը բարելավել է իր դիրքերը», այնինչ «չի փոխվել երկրի մենաշնորհային անհեթեթ իրավիճակը: Մենաշնորհը Ադրբեջանում կիսապետական է՝ ըստ ձևի, և հակապետական՝ ըստ բովանդակության: Պետության ղեկավարը և կառավարության անդամները բացահայտ հովանավորում են անձամբ իրենց կամ իրենց ընտանիքի անդամների հիմնադրած ընկերություններին»²⁹:

²⁷ <http://hetq.am/arm/news/5142/>

²⁸ <http://www.panorama.am/am/economy/2013/01/17/azerbaijan-economy/>

²⁹ <http://arm-voskanapat.do.am/blog/t'owran>

Երկրի տնտեսական զարգացվածության մակարդակը և տնտեսական ներուժը տարբեր կատեգորիաներ են: Հարուստ բնական պաշարների առկայությունը դեռ երաշխիք չէ երկրի տնտեսության զարգացվածության և մրցունակության համար: Այն կարող է, արդյունավետ օգտագործման պարագայում, նպաստել զարգացմանը: Երկիրը կարող է ունենալ տնտեսական թույլ ներուժ, բայց՝ բարձր տնտեսական զարգացման մակարդակ և՝ ճիշտ հակառակը:

Այս առումով՝ նավթագազային պաշարների առկայությունը Ադրբեյջանին չի դարձրել զարգացած և մրցունակ երկիր: Այն որ վերջինիս տնտեսությունը մեծապես կախված է նավթագազային պաշարներից և որ դրանք էքստենսիվ կերպով շահագործվում են, կարծում ենք ոչ մեկի համար գաղտնիք չէ: Բնական պաշարների ծավալների վերաբերյալ Ադրբեյջանի տարածած լուրերը չափազանցված են: Ըստ նրանց՝ կանխատեսվող նավթի պաշարները կազմում են 30 մլրդ բարել, որից բացահայտված են 7-13 մլրդ բարելը: Իսկ գազի պաշարները գնահատվում են մինչև 5 տրլն խոր. մ., որից բացահայտված՝ 2 տրլն: Ինչպես արդեն նշել ենք, արևմտյան փորձագետների և British Petroleum կազմակերպության տվյալներով՝ բացահայտված նավթային պաշարները ամենալավատեսական գնահատականներով չեն գերազանցում 7 մլրդ բարել (կամ 1 մլրդ տոննա), իսկ գազի պաշարները՝ մինչև 1,28 տրլն խոր. մ.: Վերը նշված թվերը, սակայն, ներկայումս փոխվել են. հաշվի առնելով այդ պաշարների շահագործման տեմպը՝ ներկայումս գնահատվում են մոտ 3,5 մլրդ բարել նավթ, որը նման շահագործման տեմպերի շարունակման պարագայում (1-1,2 մլն բարել օրական և 365 մլն բարել տարեկան) կավարտվեն մոտ 10 տարուց:

Ներկայումս ադրբեյջանական նավթը միջազգային կազմակերպություններին հիմնականում հետաքրքրում է ոչ թե իր, արդեն իսկ բացահայտված պաշարների մնացորդի, այլ էներգակիրների ձևավորված և գործող ենթակառուցվածքային համակարգի համար:

Զարգացած երկրների հիմնական բնութագրիչը աղքատության և չքավորության ցածր մակարդակն է և եկամուտների սոցիալական ուղղվածությունը: Թեև մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշով Ադրբեյջանը համարվում է միջին մակարդակ ունեցող երկիր, այնուամենայնիվ Gallup կազմակերպության հարցումները ցույց են տալիս, որ բնակչության 24%-ը նախընտրում է ընդմիջտ լքել երկիրը, իսկ 15% -ը ժամանակավոր աշխատանք է փնտրում երկրի սահմաններից դուրս³⁰: Տարբեր բնակավայրերի միջև գոյություն ունի սոցիալական բևեռվածություն: Բաքվում մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն մոտ 18 հազ դոլար է, իսկ այլ բնակավայրերում՝ 1500-2000 դոլար: Սա պայմանա-

³⁰ ЦРУ и Gallup: В Центральной Азии миллионы людей живут за гранью бедности. Почти треть населения стремится в гастарбайтеры, <http://www.ferghana.ru/news>.

վորված է նրանով, որ Բաքվում է կենտրոնացված արդյունաբերությունը, նավթամշակումը, ինչպես նաև նավթադուրանների շնորհիվ կառուցված շինարարական շքեղ համալիրները: Զբաղվածության խնդիրը կարգավորվում է նաև արտագաղթի միջոցով. միայն 2-3 մլն ադրբեջանցի աշխատում են Ռուսաստանում և Թուրքիայում: Արտագնա աշխատանքներից 2008 թ. երկիր է մուտք գործել 4-5 մլրդ դոլար: Այս թվերը խոսում են այն մասին որ, ի հեճուկա Ադրբեջանի նախագահի հնչեցրած գնահատականների, երկրում դեռևս առկա են չուծված տնտեսական լուրջ խնդիրներ:

Պետք է նշել, որ տնտեսական խնդիրները ուղղակիորեն առնչվում են քաղաքական, սոցիալական, մշակութային և հոգևոր ոլորտներում գործընթացներին: Հնարավոր չէ ձևավորել ժամանակակից տնտեսական համակարգ՝ առանց վերը նշված ոլորտների կարգավորման:

Ազատ տնտեսության աջակցման կենտրոնի ղեկավար Ջոհրաբ Իսմայիլի կարծիքով, «պետական պաշտոնյաները հաճախ են խոսում տնտեսական աճի մասին, սակայն բնակչության մեծ մասը դա չի զգում: Կենսաթոշակների և աշխատավարձերի մակարդակը զգալիորեն զիջում է զարգացած երկրներին: Ներդրումային միջոցները օգտագործվում են կոռուպցիոն նպատակներով, և արդեն մի քանի տարի է՝ բյուջեի եկամուտների զգալի մասը ձևավորվում է նավթային ֆոնդի տրանսֆերտների հաշվին»³¹:

Երկրում ձևավորված ստվերային տնտեսությունը քաղաքացիների մեջ առաջացնում է անվստահության զգացողություն դեպի պետական համակարգերը: Մենաշնորհային կազմակերպությունները շարունակում են խոչընդոտել մրցակցային միջավայրի ձևավորմանը: Նման մրցակցային միջավայրի պայմաններում ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա մանր և միջին գործարարության ներկայացուցիչները խուսափում են ներդրումներ կատարելուց: Խոշոր արտասահմանյան կազմակերպությունները շատ ավելի քիչ են զգում կոռուպցիոն դրսևորումների բացասական ազդեցությունը, քան մանր և միջին գործարարության ներկայացուցիչները: Նման կարծիք է հայտնել կոռուպցիայի ամերիկացի փորձագետ Քրիստոֆեր Սթիվարը³²:

Անարդյունավետ տնտեսության բնութագրիչներից է նաև, այն որ Ադրբեջանի արդյունաբերության մեջ ներգրավված են մոտ 188,6 հազ աշխատակից, որից 37,7 հազարը՝ նավթագազային արդյունահանման, 108,6 հազարը՝ վերամշակման, իսկ մնացած 42,3 հազարը՝ արտադրության և գազի, ջրի, էլեկտրաէներգիայի բաշխման ոլորտներում: Այսինքն՝ ինչպես արդեն անդրադարձել ենք, նավթագազային ոլորտը, որպես Ադրբեջանի տնտեսական հզորության հիմք, ավելի քիչ թվով զբաղվածություն է ապահովում, քան մյուս ոլորտները: Օրինակ՝ գյուղատնտեսությունն ապահովում է

³¹ <http://www.kavkaz-uzel.ru/articles/175879/>, 22.10.2010.

³² Deyerler AIN, Azerbaijan Islam News

երկրում ստեղծված արտադրանքի միայն 6-7%-ը, սակայն այս ոլորտում զբաղվածների թիվը երկրի բնակչության գրեթե կեսն է: Նույն տրամաբանությամբ բաշխվում են նաև աշխատավարձերը: Զգալիորեն բարձր աշխատավարձ ստանում են նավթագազային ոլորտի աշխատակիցները, որտեղ եկամտաբերության մակարդակը բարձր է:

Ժամանակակից պայմաններում զարգացած տնտեսությունն ինքնին ենթադրում է մրցակցային շուկայական հարաբերություններ, պետության սահմանած սոցիալական երաշխիքներ, գիտելիքի և տեխնիկայի վրա հիմնված տնտեսական առաջընթաց: Մի բան, որ չի կարելի ասել Ադրբեջանի պարագայում: Համեմատական բարձր ցուցանիշներով հանդերձ՝ Ադրբեջանի տնտեսությունը խոցելի է: Տնտեսական աճը քանակական բնույթ է կրում և ուղիղ համեմատական է նավթի արդյունահանման ծավալներին և միջազգային գներին:

«Հեշտ փողերի» շարունակական ներհոսքը երկրում առաջացրել է համակարգային խնդիրներ: Ադրբեջանի տնտեսությունը տարբեր միջազգային զեկույցներում բնութագրվում է որպես թույլ բազմազանեցված տնտեսության երկիր: Ոչ նավթային մի շարք ոլորտներ զոյատևում են պետական լրավճարումների շնորհիվ:

ՀՆԱ-ի աճը, ռազմական մեծ բյուջեի առկայությունը և բնական պաշարները չեն կարող պետության համար դառնալ իրական զարգացման երաշխիք, եթե դրանք տիրապետողները փողակենտրոն, այլ ոչ թե մարդակենտրոն մտածողություն ունեն:

1. Дорнбуш Р., Фишер С. «Макроэкономика», ИНФРА- М, М., 2006, с. 50-85.
2. Деньги. Кредит. Банки / под ред. Лаврушина О.И.,- М., 2007, с. 95-110
3. Наговицин А.Г. Валютная политика. — М.: Экзамен, 2000, с. 256.
4. Валютное регулирование в системе государственного управления экономикой: Учебник / Под общ. ред. В.М. Крашенинникова. — М.: ЗАО «Изд-во Экономика», 2003. с.142.
5. Прайм-ТАСС агентство экономической информации
6. Методологические разъяснения. Центральный Банк Азербайджанской Республики // Статистический Бюллетень. 2010. № 1 (119). с. 50
7. W. Charse SAWYER and Richard SPRINKLE, International Economy, Prentence Hall, 2005, p. 199.
8. Kevin BUCKNALL, The Balance of Payments, October 2004, p. 241,
9. CIA — The World Factbook — Country Comparison : National product
10. <http://www.zen40585.zen.co.uk/U6-3.BofP.pdf>
11. Prof.Dr. Halil Seyidoğlu, Uluslararası Finans, İstanbul 2001. – S. 55
12. <http://www.azerbaijan-news.az/archive/index.php?Lng=aze&year=2010&Pid=410>
13. <http://cyberleninka.ru/article/n/sovremennye-napravleniya-razvitiya-platezhnogo-balansa-azerbaydzhana>
14. <http://www.eia.gov/countries/cab.cfm?fips=AJ>
15. <http://iv-g.livejournal.com/948920.html>
16. <http://data.worldbank.org/indicator>
17. <http://hetq.am/arm/news/5142/>
18. <http://interfax.az/view/568707>
19. <http://pubs.usgs.gov/fs/2010/3094/pdf/FS10-3094.pdf>
20. http://www.trend.az/infographics_page.php?id=42
21. <http://www.eia.gov/countries/analysisbriefs/Azerbaijan/azerbaijan.pdf>
22. http://databank.worldbank.org/data/download/GDP_PPP.pdf
23. <http://pubs.usgs.gov/fs/2010/3094/pdf/FS10-3094.pdf>
24. Министерство экономического развития АР
<http://www.economy.gov.az/index.php?lang=az>
25. <http://bs-kavkaz.org/2011/09/slabye-osnovy-moschnoj-ekonomiki-azerbajdzhana-ii/>
26. <http://www.heritage.org/index/pdf/2013/countries/azerbaijan.pdf>
27. <http://ebooks.preslib.az/pdfbooks/rubooks/ilxm.pdf>

СУРЕН СЕЙРАНОВИЧ БАБАДЖАНИЯ
кандидат экономических наук

Экономический взлет Азербайджана: Миф или реальность?

Цель исследования – изучить ключевые стороны экономики Азербайджана, понять реальные перспективы их развития и, на этом фоне попробовать оценить экономические возможности последнего, в настоящем и будущем времени.

BABAJANYAN SUREN SEYRAN
PhD in Economics

Economic rise of Azerbaijan. Myth or Reality?

The research aims at revealing key spheres of Azerbaijan economy, have idea on economic development real trends and considering the above mentioned – try to estimate current and future opportunities of economy.



Հեղափոխող
ՍՈՒՐԵՆ ՍԵՅՐԱՆԻ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ
տնտեսագիտության թեկնածու

ԱԴԻԲԵՋԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԹՈՒՉՔԸ, ԱՌԱՍՊԵՂ, ԹԵ՞ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Խմբագիր՝ **Վ. Միրզոյան**
Տեխնիկական խմբագիր՝ **Ն. Խչեյան**

Էջադրումը և սրբագրումը՝ **Ս. Բոյաջյանի**
Ձևավորումը՝ **Ն. Խչեյանի**

Չափս՝ 70×108^{1/16}:
2,75 տպ. մամուլ:
Տպաքանակ՝ 100:

ՀՊՏՀ «ՏՆՏԵՍԱԳԵՏ» հրատարակչություն
Երևան, Նալբանդյան 128
010 59 34 37

